

Դաստանում եմ
ՀՀ ԳԱԱ ՌՖԵԲ-ի տնօրեն

Ռ. Մարտիրոսյան
16.05.2006

Ծրագիր

«Ընդհանուր ֆիզիկա»

մասնագիտությամբ

ասպիրանտուրայի ընդունելության քննությունների անցկացման համար

Մեխանիկա

- Կետի դիմամիկա: Նյուտոնի օրենքները: Դալիլեյի հարաբերականության սկզբունքը: Ոչ իներցիալ համակարգեր: Կենտրոնախույս և կորիոլիսյան ուժ: Ֆուկոյի ճռանակ:
- Պահպանման օրենքներ: Եներգիայի պահպանման օրենք: Շարժման քանակի պահպանման օրենք: Շարժման քանակի մոմենտի պահպանման օրենք: Պահպանման օրենքների կիրառումը /գնդերի բախում, ռեակտիվ շարժում և այլն/:
- Պինդ մարմնի դիմամիկա: Ծանրության կենտրոնի շարժման օրենք: Ֆիզիկական ճռանակ: Դիրոսկոպի տարրական տեսություն:
- Առաջգական մարմիններ: Դեֆորմացիայի տեսակները: Առաջգական լարումներ: Իզոտրոպ մարմինների առաջգականության հաստատունները: Առաջգականության հաստատունների միջև կապը: Առաջգական դեֆորմացիայի էներգիան: Իրական մարմինների առաջգական հատկությունները /առաջգականության սահման, պլաստիկ դեֆորմացիաներ/ :
- Դիրողինամիկա: Իդեալական հեղուկի ստացիոնար հոսք: Բերմուլի օրենք: Դեղուկի /նածուցիկ/ հոսքը մազանոթներով: Պուազեյլի բանաձև: Դեղուկների և լուծութների մածուցիկության որոշման մեթոդներ: Մրրիկներ և ցիրկուլյացիա: Լամինար և տուրբուլենտ շարժում:
- Փոքր տատանումներ: Ազատ միաչափ տատանումներ: Ստիպողական տատանումներ: Մարող տատանումներ: Դարկադրական տատանումներ շփման առկայության դեպքում: Ռեզոնանսի երևույթ:
- Դիրողինամիկայի հավասարումներ: Դարք ձայնային ալիք: Ձայնի արագություն:
- Մեխանիկայի հիմնական սկզբունքներ: Փոքրագույն գործողության սկզբունք: Լագրանժի հավասարումներ: Դամիլտոնի հավասարումները նյութական կետի և մասնիկների համակարգի համար:

Գրականություն

1. Хайкин С.Э. «Физические основы механики», 1963.
2. Ландау Л.Д., Лифшиц Е.М. «Механика», М. Наука, 1973.
3. Фриш С.Э., Тиморева А.В. «Курс общей физики», т.1, 1961.
4. Стрелков С.П. «Механика», М. Наука, 1975

2. Մոլեկուլյար ֆիզիկա, թերմոդիմամիկա, վիճակագրական ֆիզիկա

- Վիճակագրական ֆիզիկայի հիմնական դրույթները: Փուլային տարածություն: Մակրոսկոպիկ համակարգերի միկրոսկոպիկ նկարագրություն: Փուլային ծավալի պահպանման մասին թերեմը: Բաշխման ֆունկցիա: Գիբսի բաշխում: Զերմաստիճան:
- Իդեալական գազ: Գազերի կինետիկ տեսության հիմունքները: Բոլցմանի բաշխում: Մաքսվելի բաշխում: Իդեալական գազը արտաքին դաշտում: Բարոմետրիկ բանաձև: Գազի նոլեկուլների բախումների թիվը և ազատ վազքի միջին երկարությունը: Դիֆուզիա, ներքին շփումը և զերմահաղորդականությունը գազերում: Գազային օրենքները նոսրացված գազերում: Բարձր վակուումի ստացման և չափման մեթոդներ:
- Թերմոդիմամիկա: Թերմոդիմամիկ մեծությունները, որպես միկրոսկոպիկ մեծությունների միջին արժեքներ: Դամակարգի ներքին էներգիա: Զերմաքանակ և աշխատանք: Ցնչում, թերմոդիմամիկայի 1-ին օրենք: Էնտրոպիա: Աղիաբատիկ պրոցես: Զերմունակությունը տարբեր պրոցեսների ընթացքում: Էնտրոպիայի աճման օրենք: Թերմոդիմամիկայի 2-րդ օրենքի տարբեր ձևակերպումներ: Թերմոդիմամիկ պոտենցիալներ: Զերմունակությունների միջև կապը: Թերմոդիմամիկ անհավասարություններ և կայունության պայմաններ: Ազատ էներգիայի հաշվարկը: Թերմոդիմամիկ պոտենցիալները իդեալական գազի համար: Ոչ իդեալական գազեր: Վանդեր-Վալսի հավասարում: Ջոուլ- Թոմսոնի երևույթ և գազերի հեղուկացում: Թերմոդիմամիկ մեծությունների կախվածությունը մասնիկների թվից: Քիմիական

- պոտենցիալ: Փուլերի հավասարակշռության պայման: Անցման ջերմաքանակ: Կլապեյրոն-Կավիուսի հավասարում: Կրիտիկական կետ: 1-ին և 2-րդ տիպի փուլային անցումներ:
4. Ֆլուկտուացիաների տեսություն: Գառւսի բաշխում: Հիմնական թերմոդինամիկ մեծությունների ֆլուկտուացիաները /ջերմաստիճան, ծավալ, խտություն/: Բրոունյան շարժում:
 5. Քվանտային վիճակագրություն: Գառւսի բաշխում: Ներնստի թերեմ: Բոզե և ֆերմի բաշխումներ: Պինդ մարմինների ջերմունակությունը ցածր ջերմաստիճաններում: Ձերմային ճառագայթում: Ֆերմիի այլասերված գագ: Էլեկտրոնային գագը մետաղներում:
 6. Պինդ մարմին: Բյուլեղական և ամորֆ մարմիններ: Բյուլեղներում կապի օրենքների դասակարգումը: Ջերմունակության էյնշտեյնի և Դեբայի տեսությունները: Պինդ մարմինների գոնային տեսության հիմնական պատկերացումները: Մետաղներ և կիսահաղորդիչներ: Էլեկտրոնային և խոռոչային հաղորդականությունը կիսահաղորդիչներում: Մետաղների գերհաղորդականություն:

Գրականություն

1. Леонтович М.А. «Введение в термодинамику», М. 1983.
2. Левич В.Г. «Введение в статистическую физику»
3. Штрауф Е.А. «Молекулярная физика»

3.Էլեկտրականություն և Մագնիսականություն

1. Գառւսյան էլեկտրական դաշտ: Էլեկտրական պոտենցիալ: Հաղորդչի եզրային պայմաններ: Էլեկտրամագնիսական դաշտի էներգիա: Ունակություն և նրա չափման եղանակները:
2. Դիէլեկտրիկներ: Էլեկտրական դաշտը դիէլեկտրիկներում: Բևեռային և ոչ բևեռային դիէլեկտրիկներ: Դիէլեկտրիկների բևեռացում: Մեխանիկական ուժերը էլեկտրական դաշտում: Դիէլեկտրիկների բևեռացման մոլեկուլյար պատկերումը: Դիէլեկտրիկ բափանցելիության չափումը:
3. Էլեկտրաշարժ ուժեր: Պոտենցիալների կոնտակտային տարբերություն: Թերմոէլեկտրականություն:
4. Հոսանքների փոխազդեցության օրենքները: Ամպերի օրենքը: Հոսանքների մագնիսական դաշտը: Մագնիսական դաշտի ազդեցությունը հոսանքի վրա: Լորենցի ուժ: Պոտենցիալ և մրրկային դաշտեր:
5. Հաստատուն մագնիսական դաշտը մագնետիկներում: Հիմնական հավասարումներ: Մագնիսական ընկալունակություն: Հոսանքի էներգիան մագնիսական դաշտում: Փոխադարձ ինդուկցիայի և ինքնինդուկցիայի գործակից: Պարամագնիսականություն և դիամագնիսականություն: Ֆերոմագնիսականության ֆենոմենուղիքական տեսությունը: Զկայունացված պրոցեսները էլեկտրական շղթայում: Ուլարսացիայի ժամանակ:
6. Թերմոէլեկտրոնային էմիսիա և նրա օրենքները: Էլեկտրոնային լամպեր: Տարածական լիցքերի ազդեցությունը: Էլեկտրոնային լամպերի կիրառումը ուժեղացուցիչներում, ուղղիչներում և գեներատորներում:
7. Ինիզացումը և իոնների ռեկոնֆինացիան գագերում: Իոնների շարժունակությունը: Ինքնուրույն և ոչ ինքնուրույն պարապում: Լիցք-զանգված հարաբերության սահմանումը էլեկտրոնների և իոնների համար:
8. Փոփոխական հոսանք: Էլեկտրամագնիսական ինդուկցիայի օրենք: Օհմի օրենքը փոփոխական հոսանքի համար: Էներգիայի ծևափոխումը փոփոխական հոսանքի դաշտում: Հոսանքների մագնիսական փոխազդեցության էներգիան: Փոփոխական հոսանքի տեսության պարզագույն կիրառությունները: Տրանսֆորմատոր: Մագնիսական դաշտի էներգիան: Պոնդերունուտոր ուժեր: Էլեկտրական դաշտի մրրիկներ: Էլեկտրական դաշտի լարվածություն: Փոփոխական հոսանքի լարում: Շեղման հոսանք: Կոմդեսատոր: Կոճը և

- դիմադրությունը քվազիստացիոնար հոսանքի շղթայում: Էլեկտրական տատանումներ: Սկին -էֆեկտ:
9. Մաքսվելի հավասարումներ: Էլեկտրական ալիքներ: Պոյտինգի վեկտոր: Օսցիլյատոր: Էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթումը: Լույսի ճնշումը: Լեբեդի փորձերը: Ռադիոազդանշանի հաղորդում և ընդունում: Ռադիոսարքերի հիմնական տարրերը:

Գրականություն

1. Тамм И.Е. «Основы теории электричества», М. 1976.
2. Фриш С.Э., Тиморева А.В. «Курс общей физики», т.2, 1961.
3. Власов А.А., «Макроскопическая электродинамика», М. 1988.

4. Հարաբերականության հատուկ տեսություն

1. Յալիկյի ծևափոխությունները: Մայքելսոնի փորձը:
Հարաբերականության տեսության պոստուլատները: Լորենցի ծևափոխությունները: Արագությունների գումարման օրենքը և անկյունների ծևափոխությունները ըստ Եյնշտեյնի: Ինտերվալ և սեփական ժամանակ: Ֆիզիկական օրենքների ինվարիանտությունը Լորենցի ծևափոխությունների նկատմամբ:
Հարաբերականության տեսության քառաչափ ծևակերպումը: Հարաբերականության տեսության մեխանիկան: Նյութական կետի դինամիկայի հավասարումը: Իմպուլսը, էներգիան և զանգվածը ռելյատիվիստիկական մեխանիկայում: Լագրանժի հավասարումը: Լագրանժի և Յամիլտոնի ֆունկցիաները: Մասնիկների համակարգի մեխանիկան հարաբերականության տեսությունում:
2. Հարաբերականության տեսության էլեկտրադինամիկան: Լիցքի ինվարիանտությունը:
Քառաչափ հոսանք և անընդհատության հավասարում: Էլեկտրամագնիսական դաշտի հավասարումների ռելյատիվիստիկ ինվարիանտ ծևակերպումը: Շարժվող լիցքի դաշտը:
3. Էլեկտրական և մագնիսական դաշտերի վեկտորների ծևափոխությունների բանաձևերը:
Դոպլերի երևույթը: Մյուսբառւերի երևույթը: Շարժվող լիցքի ճարագայթումը: Վավիլովի-Չերենկովի երևույթը:

Գրականություն

1. Левич В.Г. «Курс теоретической физики», т.1, М. Наука, 1969.

5. Օպտիկա

1. Լույսի էլեկտրամագնիսական տեսությունը: Լույսի արագությունը և նրա որոշման մեթոդները: Տարբեր ալիքների երկարության էլեկտրամագնիսական ալիքների ստացման և հետազոտման մեթոդները: Լույսի փուլային և խմբային արագությունները միջավայրում: Չերենկովի երևույթը:
2. Լույսի ինտերֆերենցիան: Ինտերֆերենցիոն սարքեր և նրանց կիրառությունները: Ինտերֆերենցիոն և սպեկտրալ սարքեր:
3. Դիֆրակցիա: Յյուգենս -Ֆրենելի սկզբունքը: Զուգահեռ ճառագայթների դիֆրակցիան: Դիֆրակցիոն ցանցեր: Միկրոսկոպի և տելեսկոպի լուծիչ ուժը: Ունտգենյան ճառագայթների, էլեկտրոնների և նեյտրոնների դիֆրակցիան պինդ մարմիններում: Բրեգ - Վոլֆի բանաձևը:
4. Լույսի բևեռացումը: Բևեռացումը դիէլեկտրիկի սահմանի վրա անդրադանան և բեկման ժամանակ: Երկբեկում: Լույսի տարածումը բյուրեղներում: Արիեստական

երկբեկում և նրա կիրառությունները: Բևեռացումային սարքեր: Ելիպտական բևեռացում: Քառորդ և կես ալիքային թիթեղներ: Կոնդենսատորներ: Բևեռացման հարթության պտտում:

5. Անդրադարձումը և բեկումը 2 դիէլեկտրիկների սահմանի վրա: Էլեկտրամագնիսական ալիքների փոխազդեցությունը նյութի հետ: Ֆրենելի բանաձևները: Բրյուստերի օրենքը:
6. Լուսի դիսպերսիա: Նորմալ և անորմալ դիսպերսիաներ: Դիտման մեթոդները: Ուժդեսատվենսկու կերի մեթոդը: Անորմալ դիսպերսիայի կապը կլանման հետ: Դիսպերսիայի էլեկտրոնային տեսությունը: Լուսի ցրումը: Կոմբինացիոն ցրում:
7. Զերմային ճառագայթում: Սև մարմին: Կիրխիոֆի օրենքը: Պլանկի բանաձևը: Ստեֆան-Բոլցմանի օրենքը: Վինի շեղման օրենքը:
8. Մագնիսաօպտիկա և էլեկտրաօպտիկա: Ֆարադեյի երևույթը: Զեեմանի երևույթը: Նրանց բացատրությունը: Կերի երևույթը:
9. Ֆուտոէֆեկտ: Հիմնական օրինաչփությունները: Էյնշտեյնի օրենքը: Ֆուտոէմենտները:
10. Օպտիկական քվանտային գեներատորներ: Ինքնակամ և ստիպողական անցումներ: Լազերները: Օպտիկական գեներատորների աշխատանքի սկզբունքը: Շրջված բնակեցումների ստացման եղանակները: Բացասական շերմաստիճանի վիճակ: Լազերային ճառագայթման հիմնական հատկությունները: Լազերների տեսակները և նրանց աշխատանքային ռեժիմները:
11. Ոչ գծային օպտիկա: Ոչ գծային միջավայրի նյութական հավասարումները: Ֆենոմենոլոգիական ոչ գծային ընկալունակություններ: Հիմնական ոչ գծային երևույթներ: հարմոնիկների, գումարային և տարրերային հաճախությունների գեներացում: Փուլային սինքրոնիզմ, պարամետրական ոչ գծային երևույթներ, լուսի պարամետրական գեներատորներ, լուսի հարկադրական կոմբինացիոն ցրում, ինքնաֆոկուլսացում:

Գրականություն

1. Лансберг Г.С. «Оптика», М. Наука, 1976г.
2. Фриш С.Э., Тиморева А.В. «Курс общей физики», т.3, 1961г.
3. Бломберген Н. «Нелинейная оптика», М. Мир, 1966г.
4. Шен И.Р. «Принципы нелинейной оптики», М. Наука, 1989г.
5. Шуберт М., Вильгельми В. «Введение в нелинейную оптику», ч.1, М. Мир, 1976г.
6. Качмарек Ф. «Введение в физику лазеров», М. Мир, 1981.
7. Ярив А. «Введение в оптическую электронику», М. Высшая школа, 1983г.
8. Микаелян А.Л., Тер-Микаелян М.Л., Турков Ю.Г. «Оптические генераторы на твердом теле», М. 1967г.

6. Ասոմային ֆիզիկա

1. Քվանտային մեխանիկայի հիմունքները: Շրեդինգերի հավասարումը: Գծային հարմոնիկ օսցիլյատոր: Զրածնի ատոմ: Քվանտային թվեր: Զրածնի ատոմն սպեկտրը: Սպին: Անցումը բազմաէլեկտրոնային ատոմներին: Տարրերի պարբերական համակարգը: Պառլիի արգելքը և էլեկտրոնային մակարդակները: Էլեկտրոնների բաշխումը ատոմներում: Վալենտականության տեսությունը: Վալենտականության էլեկտրոնային բնույթը: Խոնեռպույար կապ: Զրածնի մոլեկուլ: Պառլիի սկզբունքը հաշվառումը: Վալենտականության հագեցվածությունը և ուղղվածությունը:
2. Բարդ ատոմների հատկությունների վերաբերյալ փորձնական տվյալներ: Ալկալիական մետաղների ատոմների սպեկտրները: Այդ սպեկտրների դուալետային բնույթը:
3. Ասոմական մագնիսականություն: Տարածական քվանտացում: Շտեռն-Շեռլախի փորձերը: Մագնիսական մոմենտների որոշման ժամանակակից մեթոդները: Զեեմանի էֆեկտի քվանտային տեսությունը: Լամդեի գործակից: Պաշեն-Բակի երևույթը և դիամագնիսականություն:

4. ՈԵՆՏԳԵՆՅԱՆ ճառագայթներ: ՈԵՆՏԳԵՆՅԱՆ ճառագայթների անընդհատ և բնութագրական սպեկտրը: Մոզլիի օրենքը: ՈԵՆՏԳԵՆՅԱՆ սերիաներ: ՈԵՆՏԳԵՆՅԱՆ սպեկտրների դուալետային բնույթը: ՈԵՆՏԳԵՆՅԱՆ սպեկտրների հիմնական օրինաչափությունների բացատրությունը: ՈԵՆՏԳԵՆՅԱՆ ճառագայթների կլանման սպեկտրները: Կոմպունի երևույթը: Ֆոտոէլեկտրական երևույթ:
5. Մոլեկուլների սպեկտրները: Մոլեկուլային սպեկտրների ընդհանուր բնութագրությունը: Մոլեկուլների էներգետիկ մակարդակները: Պտտական և տատանողական մակարդակները և անցումները նրանց միջև: Էլեկտրոնային անցումները մոլեկուլներում: Լույսի կոմբինացիոն ցորումը:
6. Բնական ռադիոակտիվություն: α , β , γ ճառագայթներ: Նուկլիոններ, էլեկտրոններ: Ատոմական միջուկ: Իզոտոպներ, իզոներներ, իզոբարներ: Զանգվածի դեֆեկտ: Ատոմային էներգիա: Դիմնական միջուկային ռեակցիաներ: Միջուկների ճեղքումը լիցքավորված մասնիկների ազդեցության տակ: Արագացուցչային սարքեր բարձր էներգիաների մասնիկների ստացման համար՝ գծային արագացուցիչներ, ցիկլոտրոններ, սինքրոնֆազատրոններ:

Գրականություն

1. Блохинцев Д.И. «Основы квантовой механики», М., Высшая школа, 1983.
2. Борн М. «Атомная физика», М., Мир, 1970.